

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԶՈՅԳ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ****Ս. ԷԶՄԻԱՆՆԷՆ**

Ուրախութեամբ եւ շնորհակալութեամբ ստացած ենք զոյգ հեռագիրներ Ս. Էջմիածնէն: Մին՝ Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոս՝ Ս. Տ. Գեորգ Զ.-էն, որով կը շնորհաւորէ Նոր Տարին եւ Ս. Ծնունդը Ս. Արքայապետ Միաբանութեան եւ պաղեսփնահայութեան, իսկ միւսը Գեորգոյն Հոգեւոր Խորհուրդէն, որով կը հրահանգուին 1950 տարւոյ ընթացքին կատարել Ամենայն Հայոց Հայրապետի 80-ամեայ յոբելանը:

Ստորեւ կուտանք զոյգ հեռագիրները քարգմանաբար:

Երեւան**Տ. Տեղակալ Եղիշէ Վրդ. Տէրտէրեան****Պատրիարքարան Հայոց Երուսաղէմի**

Ընդունեցէք մեր շնորհաւորութիւններն ու օրհնութիւնները Նոր Տարւոյ եւ Ս. Ծննդեան առթիւ եւ հաղորդեցէք նոյնը եկեղեցական դասուն, կրօնա-կրթական հաստատութեանց եւ մեր սիրելի ժողովուրդին:

ԳԵՌՈՐԳ Զ.**Տ. Տեղակալ Եղիշէ Վրդ. Տէրտէրեան****Պատրիարքարան Հայոց Երուսաղէմի**

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, 1950 տարւոյ ընթացքին պիտի կազմակերպէ Վեհափառ Հայրապետի 80-ամեայ յոբելանը: Յորեկնական հանդիսութեանց կազմակերպումը Երուսաղէմի եւ շրջակայից մէջ կը վստահուի ձեզի: Մանրամասն տեղեկութիւնները նամակով:

**ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ
ԽՈՐՀՈՒՐԴ**

Նորին Վեհափառութիւն Ապստլա բազմաթիւ անհանգստութեան առիթով փոխանակուած հեռագիրներ:

21/1/50**ՍԵՆԵԿԱՊԵՏ****ՆՈՐԻՆ ՎԵՀ. ԱՊՏԱԼԻԱ ԹԱԳԱՒՈՐԻ****ՊԱԼԱՏԻՆ — ՌԱՍԿԱ — ԵՐԱՍԱՊԷԼ.**

Խոր վշտով ինձանք Նորին Վեհափառութեան անհանգստութիւնը. կը մաղթեմ շուտափոյր ապաքինում եւ կ'աղօրեմ, անեմախառող Աստուծոյ բովանդակ հայ հասարակութեան հետ միասնաբար, իր քանկագին կեանքին համար:

Տեղապահ**ԵՂԻՇԷ ՎԱՐԳԱՊԵՏ****21/1/50****ԳԵՐԱՇՆՈՐԷ****ՏՆՂԱՊԱՀ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ****ԵՐՈՒՍԱԴԷՍ**

Ձեր հեռագիրը ներկայացուցի Նորին Վեհափառութեան. Ն. Վեհափառութիւնը, շնորհակալութիւն կը յայտնէ Ձեզ, Ձեր մասնացած քարեմաղթութիւններուն իր առողջութեանը համար:

Սենեկապետ**ՀԱՇԻՄԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ****ԳԵՐՇ. ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊՍ. ՍԻՐՈՒՆՆԱՆ****ԵՒ****ԳԵՐ. Տ. ԽՈՐԷՆ ԵՊՍ. ԲԱՐՈՅԵԱՆ****ՄԵՐ ՄԷՋ**

Ս. Արքայապետ Գեորգ. Տեղապահ Հօր երաւելով, Եգիպտոսի հայոց առաջնորդ Գեորգ. Տ. Մամբրէ Արքեպս. Սիրունեան 17 Յունուարին, իսկ Կիլիկիոյ Հայրապետութեան Գրան Եպս. եւ յուսարապետ Գեորգ. Տ. Խորէն Եպս. Բարոյեան Յունուար 16ին, ժամանեցին Ս. Արքա, մասնակցելու ի Բերդեհէմ Ս. Ծննդեան մեր արարողութեանց, եւ կատարելու ձեռնադրութիւններ՝ Ս. Արքայապետ հովանոյն տակ եկեղեցականութեան պատրաստուած երեսօտացիներու:

Յանուն Գեորգ. Տեղապահ Հօր, եւ Ս. Արքայապետ Միաբան Հայրեանց, կը յայտնեմ շնորհակալութիւն մեր սիրելի Սրբազն եղբայրներուն, եւ կը մաղթեմ իրենց երկար եւ բաշտող կեանք, հասնելու նահապետ մեր յովուրդի հոգեւոր եւ ազգային կարիքներուն:

ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԱԹՈՒՌՅՈՒ

ՀՈՎԱՆՈՒԹՅՆ ՆԵՐՔԵՒ

Ա. — ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՅԱՆԱՅԻ

Ս. Աթոռոյ Տեղապահ՝ Դերշ. Զօր կարգադրութեամբ և Պատ. Տնօրէն ժողովոյ որոշմամբ Ս. Աթոռոյ Միաբանութեան թիւին վրայ աւելցաւ նոր արեղայ մը, Յունուար 22ի կիրակիին տեղի ունեցած ձեռնադրութեամբ։ Նորընծան՝ Բարեշնորհ Տիրացու Պետրոս Սրկ. Գաղանճեան, եկած է Կ. Պոլսէն իբրեւ ժառանգաւոր սան փոքրիկ տարիքին, աւարտած ժառանգաւորաց վարժարանի քառամեայ դասընթացքը և ձեռնադրուելէ ետք սարկաւագ, շարունակած իր ուսումը Բնծայարանի երեք տարիներու բարձրագոյն դասընթացքը անցնելով, և աւարտած զայն ևս երկու տարիներ առաջ։

Պաղեստինի ծանօթ տաղանապը, և Հանգուցեալ Ս. Պատրիարք Զօր հիւանդութիւնը եղան պատճառներ, որ Տիրացու Պետրոս չկարենար ընդունիլ արեղայական ձեռնադրութիւն և ըսպառէր յարմարագոյն և լաւագոյն առիթի մը, տեսնելու համար իրագործումը իր Աթոռանուէր և ազգանուէր ձգտումին և փափաքներուն։

Պետրոս Գաղանճեան ծնած է Պոլիս, Կէտիք փաշա թաղամասին մէջ, նախնական կրթութիւնը ստացած է Պէդպեան և Կեդրոնական վարժարանները. 1940 նոյեմբեր 26ին կուգայ երուսաղէմ իբրեւ ժառանգաւոր սան, 1945 Դեկտեմբեր 11ին կը ձեռնադրուի սարկաւագ ձեռամբ Տ. Կիւրեղ Ս. Պատրիարքի, և Բնծայարանի դասընթացքը կ'աւարտէ 1948ին, որմէ ետք, կը ծառայէ սրբատեղեաց մէջ իբրեւ ճարպիկ ու նախանձանդիր սարկաւագ, կ'օգնէ ժառանգաւորաց վարժարանի հոգեշնորհ տեսչին, թեթեւցնելով անոր բեռը, և վերջին տարին կը ստանձնէ ուսուցչական պատասխանատու պաշտօն ևս, դասաւանդելով եկեղեցական ու պատմական դասեր ժառանգաւորաց փոքր դասարանին։

Կուսակրօն քահանայութեան ուխտագիրը ստորագրելէ յետոյ, ըստ որոշման Տնօրէն ժողովոյ, Յունուար 21ի Շարաթ երեկոյին կատարուեցաւ կոչումի սրտագրաւ կարգը Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ, երբ առաջնորդութեամբ Դերշ. Տ. Խորէն եպ. ի, ու Տ. Ս. Սերովբէ և Հայկասեր վարդապետներու, նորընծայն տաճարի դռնէն մինչև դասի ատենանը կը յառաջանար ծնրալոք և կը յայտարարէր իր հաւատոյ դաւանութիւնը։

Յաջորդ օր, Կիրակի, Դերշ. Տ. Մամբրէ Ս. Արքեպ. Սիրունեան, կատարեց քահանայական ձեռնադրութիւն հանդերձ մատուցմամբ Ս. Պատարագի, Խարտաւիղին էր Դերշ. Տ. Խորէն եպ.։ Բարոյեան, Օծումի նուիրական պահուն, Պետրոս վերակոչուեցաւ Տ. Գարեգին, ի յարգանս

Կիրիկիոյ մեծանուն կաթողիկոսին։ «Ողորջն»ի ատեն, Դերշ. Տեղապահ Հայրը և բոլոր հոգեւորական դասը համբուրեցին ձեռնադրեալին օծեալ ճակատն ու աջը, «Հայր մեր»ի ժամանակ, պատարագիչ ու ձեռնադրիչ Սրբազան Հայրը, խօսեցաւ խրատական իր սրտառուչ քարոզը, թեկարբելով նորընծայեալին ըլլալ մշակ առանց ամօթոյ, հոգեւորական լի հաւատքով, սիրով ու ծառայութեան ոգիով։

Նոյն օրը, երեկոյեան ժամերգութենէն յետոյ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մուտքին կատարուեցաւ վեղարի օրհնութեան ու տընտութեան արարողութիւնը։ Նորընծայ Արեղան Ս. Ստեփանոսի մատրան մէջ ընդունելէ ետք շնորհաւորական խնդակցութիւնները Միաբան վարդապետներու և եկեղեցաւէր աղայայիններու, առաջնորդուեցաւ Ս. Յարութեան Տաճար, անդ անցնելու համար քառասունքի իր պատարասութեան օրերը պահելով ուսուցիչութիւն։ Այս շրջանիս իրեն ուսուցիչն ու վարժիչը պիտի ըլլայ Ս. Յարութեան Տաճարի տեսուչ՝ Զօր. Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեան։

Բ. — ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ

Քահանայական ձեռնադրութենէ քանի մը օրեր յետոյ, Յունուար 25ի երեկոյեան ժամերգութենէն ետք, Դերշ. Տեղապահ Զօր և Պատ. Տնօրէն ժողովոյ կարգադրութեամբ՝ Դերշ. Տ. Խորէն եպ.։ Բարոյեան զարթութեան աստիճան տուաւ այն ժառանգաւոր սաներուն և երգեցիկ տղոց, որոնք կը ծառայէին ի Ս. Յակոբ և այլ սրբատեղիներ, իբրեւ ծայնաւորներ։

Դպրութեան աստիճաններու շնորհաբաշխութենէն անմիջապէս ետք, Կիսասարկաւագ ձեռնադրուեցան տիրացուներ՝ Դէորդ Չինչինեան, եղիա Չղջանեան, Վառլապուհ Գապարաճեան, և Դեղամ Գարիկեան։

Այս չորս երիտասարդներէն առաջին երեքը, իբրեւ ժառանգաւոր սաներ՝ երկու տարի առաջ աւարտած էին արդէն ժառանգաւորաց դասընթացքը և կը շարունակէին իրենց ուսումը, իբրեւ Բնծայարանի սաներ, սպասելով յարմար առիթի մը, ընելու կուսակրօնութեան իրենց ուխտը և ընդունելու սարկաւագական աստիճանը։

Իսկ Դեղամ Գարիկեան, մեծցած ըլլալով Ս. Յակոբեանց վանքի շրջափակին մէջ, և ծառայած Ս. Աթոռոյ աւելի քան տասներկու տարիներ իբրեւ քարտուղար տպարանի, և տարիներ շարունակ հետեւած ըլլալով ժառանգաւորաց և Բնծայարանի դասընթացքներուն, կուսակրօն եկեղեցական ըլլալու մտադրութեամբ, խնդրագրով մը դիմեց Պատ. Տնօրէն ժողովին յայտնելով իր կրօնաւորելու փափաքը և ընդունուեցաւ սոյն խումբին մէջ։

Յաջորդ օր, Յունուար 26ին, Անուանակոչու-

թեան տօնին, կատարուեցաւ չորս կիսասարկաւայներու՝ սարկաւազական ձեռնադրութիւնը ձեռամբ պատարագիչ Գերշ. Տ. Խորեն եպս. Բարոյեանի, Ս. Գարուսեան Տաճարին մէջ, Ս. Գերշ. Բարոյեանի առջև, Խարտաւիւղին էր շոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արարանեան, առնթերակայ ունենալով ժառգ. Վարժարանի և Ընծայարանի տեսուչ շոգ. Տ. Սերոբէ Վրդ. Մանուկեանն ու շոգ. Տ. Միւսն Վրդ. Կրճիկեանը:

Ձեռնադրութեան լրումին, ձեռնադրիչ Սերբազան Հայր օրուան տօնին պատշաճ քարոզով անդրադարձաւ նաև նորընծաներուն առջև բացուող ծառայութեան երկար ճամբուն որ յալթանակի ճամբան պիտի ըլլար եթէ նորընծաները առանց աջ ու ձախ թեքելու կարենային անցնիլ անկէ, զիմանալով տառապանքներուն, զրկանքներուն և այն բոլոր դժուարութեանց, որոնք անպակաս են ամէն կարգի փառքի ու ծառայութեան ճամբաներուն: Սերբազան Հօր խրատական խօսքերուն աւարտին, նորընծայ բարեշնորհ սարկաւազները սպասաւորեցին Ս. Պատարագին: Հատուցեալներու խումբն քաղմութիւնը այս կերպով տօնած եղաւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Անուանակոչութեան տօնին հետ նաև մոգեւոր վերածնութեան տօնը այս չորս երկուստարկ հոգիներուն, որոնք իրենց մատաղ հասակները նուիրաբերեցին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին և ծառայութեան:

Յանուն Գերշ. Տեղապահ Հօր և Ս. Գալուսեան զինուորակալ Միաբանութեան, կը մաղթենք նորընծայ սարկաւազներուն անսայթաք զնայք և խոստմնալից իմաստութիւն, աւարտելու իրենց ուսման ջրջանը. որպէսզի արժանանան կուսակրօն քահանայութեան սուրբ ատրիանին և դառնան ընտիր պաշտօնեաներ Հայաստանեայց Առաք. Ս. Եկեղեցոյ:

Կը գնենք աստ ձեռնադրեալ նորընծաներու հակիրճ կենսագրականները:

1. — Բարեծնի Տիւրգու Պրոքիմեան, ծնած Հալէպ 1929 Սեպտ. 10ին, նախակրթութիւնը ստացած Երուսաղէմի Ս. Թարգմանչաց վարժարանի մէջ, ուրկէ չըջանաւարտ եղած 1945ին, և իրրեւ ուխտի գաւակ նոյն տարին ընդունուած ժառանգաւոր:

2. — Բարեծնի Տիւրգու Եղիա Զղջանեան, ծնած Հալէպ 1930ին, փոքր տարիքէն յաճախած Եսուէսներու (Յիսուսեաններու) Ֆրանսական վարժարանը, և 1944ին եկած Երուսաղէմ իրրեւ ժառանգաւոր:

3. — Բարեծնի Տիւրգու Վահագնայի Գալաւանեան, ծնած Կ. Պոլիս 1927ին, նախակրթութիւնը ստացած Բերայի Եսայեան վարժարանի և ապա Ղալաթիոյ Կեղրոնական լիսէի մէջ մինչև 1947, նոյն տարին իրրեւ ժառանգաւոր եկած Երուսաղէմ և ընդունուած չորրորդ դասարան:

4. — Բարեծնի Տիւրգու Գեղամ Գալիկեան, ծնած Երուսաղէմ 1921ին, գաւակն է Սերաստացի բանակէր-զրագէտ կարապետ Գալիկեանի, նախնական ուսումը ստացած Երուսաղէմի Ս.

Թարգմանչաց վարժարանին մէջ և զայն աւարտած 1930ին:

1937էն ի վեր ծառայած Ս. Աթոռոյ տպարանի մէջ իրրեւ զօրժակատար և քարտուղար: Հետեւած է Ս. Աթոռոյ Ընծայարանի դասընթացքներուն 1941-1944 խորրեւ ազատ ուսանող:

Ս. ԾՆՆՆԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ

Ս. Ծննդեան և Աստուածայայտութեան տօնի ճրագալոյցի առթիւ, Ս. Աթոռոյ Գերշ. Տեղապահ Հայր և Ս. Աթոռ հրաւիրուած Սերբազանները, ընկերակցութեամբ Պատ. Միաբանութեան հանգիսաւոր թափօրով և առաջնորդութեամբ ոստիկանական ջոկատի, Հ. Ե. Մ. Ի. Հ. Մ. Բ. Մ. Ի. և Երուսաղէմացի Հայոց Բարես. Միութեան արիւնքով՝ մեկնեցան զէպի աւստրիական հօսթիս, ուր երկու տասնեակ ինքնաշարժեր կը սպասէին, տանելու համար թափօրականներն ու ուխտաւոր հաւատացեալները զէպի Բեթղեմէմ. Երուսաղէմի ներկայ կացութեան հետեւանքով բացուած նոր ճամբէն, ժամը 9ին, ինքնաշարժերը սկսան իրենց ընթացքը, առաջնորդութեամբ ոստիկանական կառքին, անցնելով Գեթսեմանիի ձորէն, ժամը 10.15ին, թափօրը կը հասնի Պէյթահուր գիւղը, ուր կը զիմաւորուին Բեթղեմէմի, կառավարութեան, քաղաքապետարանի, ոստիկանական, զինուորական ներկայացուցիչներէ, և ազգայիններէ ու օտարներէ, Պաշտօնական ընդունելութիւնք կը կատարուին Պէյթահուրի քաղաքապետարանի մէջ, ուր բացի վերոյիշեալներէ, կային նաև զիւղի աւագանին և յոյն համայնքի հոգեւոր հովիւը, Բօնեակի և սուրճի պատուասիրութիւնէն, ու փոխանակուած պաշտօնական սիրտի խօսքերէ ետք, ժամը 10.40ին թափօրը կը շարունակէ իր համբան առաջնորդուած Անդր-Յորդանանցի ձիաւորներու ջոկատէ մը, որ կ'աւելցնէր փայլը շքերթին:

Ժամը 11ին հինգ մնացած, թափօրը կանգ առաւ, Ս. Ծննդեան Տաճարի մեծ հրապարակին առջև, ուր կը սպասէր ծովածաւալ բազմութիւն մը հայ և օտար հաւատացեալներու:

Բեթղեմէմի զանգակներու ղօղանջներուն և հաւատացեալ բազմութեան ուրախութեան կանչերուն մէջ Գերշ. Տեղապահ Հայր և Սերբազան Հայրերը զիմաւորուեցան տեղւոյն կառավարիչէն, Պաշտօնի ոստիկանաց ընդհ. հրամանատարէն, Անդր-Յորդանանցի զինուորական ըսպաներէ, քաղաքապետութիւնէն և մեր վանքի շոգ. Տեաչէն ու Միաբանութիւնէն:

Հոն էր նաև Անդր-Յորդանանի ներքին գործոց նախարարն ու փոխ վարչապետը, արքայական նուագախումբը և բազմաթիւ կարեւոր անձնաւորութիւններ:

Տեղապահ Հօր և Սրբազան Հայրերու նախագահութեամբ կազմուած թափօրը վարդապետներէ, սարկաւազ-ու բերք Սիւսեթիւններու սկաւառ արիւններէ, կը յառաջանայ դէպի վանք, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ, ուր օրհնութեամբ հանդիսականք կ'արձակուին: Պաշտօնական անձնաւորութիւնք և բարձրատիման բարեկամ հիւրեր, ընդունուեցան տեսչարանի մէջ և պատուաւորութեան պատշաճ ձեւով:

— Յետ միջօրէին, ժամը 2ին, Գերշ. Մամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեանի և Գերշ. Տ. Խորէն Եպս. Բարոյեանի նախագահութեամբ, թափօրը կազմուեցաւ Ս. Ծննդեան սիւնապարզ տաճարին մէջ, և «Հրաշափառ» երգեցողութեամբ ուղղուեցաւ դէպի Ս. Այրը, ուր ուխտի և երկրպագութեան արարողութիւնէն ետք՝ բարձրացաւ Ծննդեան Եկեղեցւոյ մեր բաժինը, և ուր կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը ու ապա Գերշ. Տ. Խորէն Եպս. Բարոյեան մատոյց ծրագրալոյցի հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Ս. Այրին մէջ: Յաւարտ Ս. Պատարագի, զգեստաւորեալ և հանդիսաւոր թափօրով ու «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ, հաւատացեալները երեկոյեան ժամը 6ին ուղղուեցան դէպի մեր վանքը նախագահութեամբ Գերշ. Մամբրէ Ս. Հօր:

Գիշերուան ժամը 10էն մինչև յաջորդ առաւօտեան ժամը 6.30, տեղի ունեցան գիշերային և առաւօտեան պաշտամունքներն ու զոյգ պատարագները, առաջինը մատոյց Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան, իսկ երկրորդը Գերշ. Տ. Մամբրէ Սրբազան Սիրունեանի կողմէ: Զրօրհնեաց արարողութիւնը կատարեց Գերշ. Տ. Խորէն Եպս. Բարոյեան: — Կէս գիշերուայ Ս. Այրի մեր պաշտամունքի պահուն, Գերշ. Տ. Մամբրէ Ս. Արքեպիսկոպոս Սիրունեան կարգաց հետեւեալ պատգամը յանուն Ս. Աթոռոյ Գերշ. Տեղապահ Հօր և Պատ. Միաբանութեան:

Սիրելի ժողովուրդ Հայոց՝ որ ի սամման Պաղեստինի, ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի:

Երկու տարիներու արիւն արցունք լուսեղեն յետոյ, խորհալուած սրտով, բայց հոգեւոր մխիթարութեամբ, Բեթղեմի այս Ս. Այրէն, յանուն Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Ս. Բաղարեանց ուխտանուէր Միաբանութեան, նորէն եղի կը փախանցեմ, ժողովուրդ Հայոց, օրհնութեան եւ խաղաղութեան սուրբ աւետիսը՝ Քրիստոսի իմնեցեալ եւ Յայնութեան այս վեհապալաւ:

Վստան ենք թէ մեր պատմութեան եւ խղմանքի մութ քաղաքներէն հոսող այդ կանչին մէջ, ամեն հայ պիտի զգայ մաս մը իր հոգիէն, նման այն անորեային որ կը ստառուայ երբ կը լսէ իր հեռաւոր Հայրենիքի մէկ երգը:

Նորէն կը հնչեն սրբախորհուրդ այս գիշերուան մէջ, զանգակներ Բեթղեմի, խոր ու քրքուռ, մեր անդոհին ու արցունքին խառնելով իրենց քաղցր ու աներկային մեղեդին:

Անոնց ծայրը արեւոս նամայ մը ինչպէս, կ'երկարի ժամանակին ու միտքերու փալաւմներու մէջէն՝ դէպի ամրոցը, նոր ու զայիք խոստումներու:

Հանգակներ Բեթղեմի, ձեր ծայրը՝ տեսիլք, երկնաքիչ երազն է իմ պապերուս, եւ նամբան անկուս մեր հաւատքի յոյսերուն: Զեր քրքիւին մէջէն, մենք կը լսենք հազարամեայ խորհուրդ մեր մտարբուն եւ աստուածաբալ նախնիներու հոգիներուն: Կը հնչէ նորէն, հառապայք առ հառապայք այս խորհրդաւոր եւ սուրբ գիշերուան մէջէն՝ մեր լացին ու արիւնին վրայ բանալով աստիք մխիթարութեան:

Ժողովուրդ Հայոց, ոչ մէկ ասեմ գուցէ, ուխտ եւ մանկանք Ս. Աթոռոյս, իրեւ իմ պատգամաւորներդ, չենք ծնողաբալ այսպէս սրտազին՝ Ծննդեան այս խորհուրդին մէջ, որքան այս պահուս: Անցնող երկու տարիները որոնք իրենց նման չունին զուցէ Սուրբ Երկրի պատմութեան մէջ, ուրախ ծնունդներ չբերին մեզի, մեր պաղեստինացի եղբայրներէն եւ քոյրերէն շատեր՝ սնազուրկ եւ քաւառ, ծաւառած վանքի կամարներուն ներքեւ, չունեցան յանախ աւանդական ու ջերմիկ սեղանը Ս. Ծննդեան ուրախութեան, իսկ այլուր մեկնողներ՝ սաբալ բոյն մը իրենց զուարթ հանգչեցնելու, անոնցմէ շատեր, նման մեր Փրկչի ծնողին, չունեցան տեղ ինչեւանին:

Փառք նախախնամութեան, ողջ ենք տակաւին, եւ հակառակ մեզի պատարագաւոր զմեզակ պայմաններուն եւ մեր հոգին կրծող ցաւերուն, հազաւ գրանք նորէն մեր պապերու հաւատքին, եւ ամենքս միասին, Միաբանութիւն եւ ժողովուրդ, վեր առած մեր արցունքոս աչքեր Բեթղեմի նորէն ծագող աստիքն ու անոր յոյսին տակ վերստին այս գիշեր ծնող խաղաղութեան եւ սիրոյ իշխանին, կ'աղերսենք միաբերան, որ «փարափն մէզն ու մառախուղը, չհանան շարիքն ու յոյսահասութիւնը, տարագրին տալանակն ու տարութիւնը մեր հոգիներէն եւ աշխարհէն»: Որպէսզի իր սեր-ըլլալ Օրէնք բոյն սիրտներուն, իր խաղաղութիւնը պատգամ բոյն հոգիներուն, եւ իր կամքը երջանկութիւնը մարդներուն:

Ընդունէ այս մարդանք. ժողովուրդ Հայոց, իրեւ իմ հոգիդ եւ պատմութեանը ծայրը, եւ հանդերձ ինքզինդ անոր յոյսին եւ բարիքներուն:

Մեզի հետ եղէ այս գիշեր, բոյնք՝ ո՛վ զուր իմ ցեղիս հաւատաւոր գաւակներ, մեր նախնեաց բոյնապինդ հաւատքով ու սիրով անգամ մը եւս խոնարհելու մանկացեալ Փրկչի մտաւրին առջեւ եւ անոր ձօնելու մեր զգացումներուն յոյսն ու խանկը: Հաւատա՛, ազգ իմ սիրելի, թէ ինչ որ կը մնայ մեզի ազնիւ, սուրբ եւ յաւերժական, անկողապետի ժառանգութիւնն է մեր հաւատքին: Ինչ ու կենսական մէջ մեզ կ'ընէ վայրկեանի մը համար ճոյնիսկ, գիտակից քրքիւ, կայրակն է անբաւարեան խորհուրդէն ինկած մեր հոգիին:

Վեր առ նայուածիդ ժողովուրդ Հայոց եւ դարձաւ զայն Բեթղեմի Ս. Այրին, ընդունելու քաղցր աւետիսը իմ հայրերուդ Աստուծոյն: Ընդունէ այդ սուրբ ողորմը իրեւ սրբազան կրակ ժառանգութեան, եւ վառէ հոգիդ կանթեղներ անոր բոցէն: Վա՛յ է մեզի եթէ անկարող ենք այլեւս երկիմներ բանալ ու հանչնալ մեծութիւնը զգացումներուն որոնք Աստուծոյն կ'իշխենք մեր սուգներուն եւ ցաւին վրայ:

Ժողովուրդ Հայոց ի Սփիւռս աշխարհի տարեկան, Ս. Ծննդեան Այրէն եղի իմ սրբազան շարական-

ցերեզ ընդմէջէն, շարունակեալ հաւասար այս հրաւայի խորհարդին, որ Բեքդեմէմինն է, փոքրամասնեան, փոքր մասնորոգ գաղութներու եւ դարեւոր: Չայնեռու կենսամորոգ այդ անմեծ երբեմն գոմար ու բոլոր, երբեմն բոլոր ու սարսուռ, կանցն է մեր ծագութեան մեզմէ մեզի:

Ապա, յաւարտ Մամբէկ Սրբազան Հօր կողմէ մատուցուած պատարագին, և իր նախագահութեամբ՝ թափօրը առաջնորդուեցաւ դէպի մեր վանքը, ուր կատարուեցաւ ընթերցումը Ծննդեան Ս. Աւետարանին երգեցողութեամբ Քառք ի բարձունքին:

Կարճ հանգիստէ մը ետք Միաբանութիւն և հաւատացեալք կը մեկնին Բեթղեմէմէն դէպի Երուսաղէմ, ժամը 10.15ին թափօրը արդէն հասած է Դաւթի բերդին դիմաց, ուրկէ պաշտօնական երգեցողութեամբ կ'ընթանայ դէպի Ս. Բակոբեանց վանքը, պատրիարքարանի դահլիճին մէջ, Միաբանութիւն և հաւատացեալք, դարձեալ կը ընդհարեն զիրար Ս. Ծննդեան աւետիսով ու Դերաշնորհ Մամբէկ Սրբազան Հօր օրհնութեամբ կ'արձակուին ի խաղաղութիւն:

Մինչ Բեթղեմէմի Ս. Ծննդեան Տաճարին և Այրին մէջ կը կատարուէին հանդիսաւոր արարողութիւններն ու պատարագները, Երուսաղէմի մէջ, ճրագալոյցի պատարագը կը մատուցուէր Հօգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեանի կողմէ ի Ս. Թարութիւն, Ս. Դերեկմանին վրայ, իսկ Ծննդեան Ս. Պատարագը Ս. Բակոբայ Մայր Տաճարին մէջ, Հօգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի կողմէ, ժառանգաւորներու բացակայութեան երգեցողութիւնք կատարուեցան՝ ըստ սովորութեան՝ քաղաքացի երգեցիկ երիտասարդներու կողմէ:

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

✦ 25 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Բակոբեանց Մայր Տաճարին մէջ, պատարագիչն էր Հօգ. Տ. Սերուբէ Վրդ. Մանուկեան:

✦ 30 Դեկտ. Ուր. — Երեկոյեան ժամերգութենէն ետք կատարուեցաւ վաղուան տօնին նախատեսակը Ս. Բակոբեանց Մայր Տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Հօգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

✦ 31 Դեկտ. Եր. — Ս. Բակոբայ Միջնայ Հայրապետին. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Դիմազի մատրան մէջ, պատարագիչն էր Հօգ. Տ. Միլոն Վրդ. Կրճիկեան:

✦ 1 Յունուար 1950 Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թարութիւն՝ մեր վերնատան մատրան մէջ, պատարագիչն էր Հօգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

✦ 4 Յուն. Դշ. — Եկտ երեկոյեան ժամերգութեան

թեան կատարուեցաւ վաղուան տօնին մեծահանգէս նախատեսակը Ս. Բակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Դեր. Տեղապահ Հօր:

— Առաւօտեան ժամը 10ին, Դեր. Տեղապահ Հօր այցելեցին հին քաղաքի իտալիոյ հիւպատոսը և թէլ Աւիլի իտալիոյ Մինիսթրը:

✦ 5 Յուն. Եշ. — Տօն Առաքելական Ս. Աթոռոյն երուսաղէմի (Ս. Դաւթի մարգարէին եւ Բակոբայ Տեառնեղօր). հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Բակոբեանց Մայր Տաճարին մէջ, Եպիսկոպոսական խոր ի գլուխ պատարագեց և քարոյեց Հօգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեան: Ապա տեղի ունեցաւ հանգստեան հանդիսաւոր պաշտամունք վառ հանգուցեալ պատրիարքաց Առաքելական Ս. Աթոռոյն երուսաղէմի:

✦ 6 Յուն. Ուր. — Եկտ երեկոյեան ժամերգութեան կատարուեցաւ վաղուան տօնին նախատեսակը Ս. Բակոբեանց Մայր Տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Դեր. Տեղապահ Հօր:

✦ 7 Յուն. Եր. — Ս. Սեփանոսի նախատեսակաւ յայտարարուեցաւ, ըլլալով նաև որ տօնախմբութեան Ս. Աթոռոյս սարկաւազաց և ուրարաղաց դասուն, առաւօտեան ժամերգութեան ընթացքին տեղի ունեցաւ նաև սարկաւազներու և ուրարակիրներու յատուկ հանգէս: «Փառք ի բարձունք» օրհներգութենէն մինչև առաւօտեան ժամերգութեան աւարտը բարեշնորհ սարկաւազներ և ուրարակիրներ արձաթագամ շապիկներով և սպաւաւոր ի գլուխ, լուցեալ տապանակներ և բռնվառ ի ձեռքին մանակիցեան արարողութեանց, Օրուան Ս. Պատարագը մատուցց Հօգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան:

✦ 8 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն մէջ, պատարագիչն էր Հօգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանաթան:

— Երեկոյեան ժամերգութենէն յետոյ, կատարուեցաւ վաղուան տօնին նախատեսակը, հանդիսապետութեամբ Հօգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհանեանի:

✦ 9 Յուն. Բշ. — Սրբոց առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Բակոբայ Ս. Պօղոս և Պետրոս վերնայարկի մատուռներուն մէջ, պատարագիչն էր Հօգ. Տ. Պարգեւ Վրդ. Վրթանէսեան:

— Երեկոյեան ժամերգութենէն ետք, տեղի ունեցաւ վաղուան տօնին մեծահանգէս նախատեսակը Ս. Բակոբեանց Մայր Տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Դեր. Տեղապահ Հօր:

✦ 10 Յուն. Դշ. — Սրբոց Որդոցն Ռոսման. մեծահանգէս Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Բակոբեանց Տաճարի Ս. Դիմազի մատրան մէջ, պատարագիչն էր Դեր. Տեղապահ Հայրը որ նաև քարոյեց «Ո'չ գիտէք զինչ խնդրէք» քնարանով և բացատրեց աւետարանական ծառայութեան ամբողջական գիտակցութիւնը:

✦ 14 Յուն. Շր. — Նոր Տարի (ըստ Հին Տոմարի). Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գալոբեանց Մայր Տաճարին մէջ. պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողոսեան: Յետ Ս. Պատարագի Միաբանութիւն և Ժողովուրդ բարձրացան պատրիարքարան շնորհաւորելու Գեր. Տեղապահ Հայրը Նոր Տարւոյ առթիւ: — Երանանոր՝ Տ. Կիւրեղ Ս. Պատրիարք Հօր մահուան տուգին պատճառաւ չեղան նախընթաց տարիներու հանգիստութիւնները: Գեր. Տեղապահ Հայր սուրբը ընելէ ետք Նոր Տարւոյ իր շնորհաւորական խօսքը Միաբանութեան և Ժողովուրդին, բաժնեց Ս. Երկրի բերքը եղող Նոր Տարւոյ աւանդական նարինջը:

— Կէսօրէ ետք, Երուսաղէմի առաջ քարտուղար ձաւալ պէյ Տուքան և Երուսաղէմ նահանգի մուխասարֆ Ինամ պէյ Հաշէմ, ամանորի առթիւ այցելեցին Գեր. Տեղապահ Հօր:

✦ 17 Յուն. Դշ. — Առաւօտեան ժամը 10ին, Միաց. Նահանգաց ընդհ. հիւպատոս Մր. Կիպսըն և իր օգնականը այցելեցին Գեր. Տեղապահ Հօր:

✦ 20 Յուն. Ուր. — Բ. օր Ծննդեան, յիշատկ մեկեղց. Ս. Պատարագը Ս. Գալոբեանց Տաճարի մէջ մատուցեց Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւանեսան:

✦ 21 Յուն. Շր. — Ի զիմաց Գեր. Տեղապահ Հօր և Միաբանութեան, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւանեսան, Կէսօրէ ետք, գնաց Ռատուտ արար հրամանատարութեանց կեդրոնատեղին, ուր Ն. Վեհ. Ապտալլա Թաղաւոր անհանգիստ կը պառկէր և արձանագրեց իր անունը այցելութեանց տոմարին մէջ:

✦ 23 Յուն. Բշ. — Կէսօրէ առաջ, քաղաքիս և շրջակայից ընդհանուր ոստիկանապետ Ռատի պէյ Ուննապ իր օգնականներով Ս. Ծննդեան շնորհաւորութեան եկան Գեր. Տեղապահ Հօր:

✦ 24 Յուն. Դշ. — Յետ միջօրէի, ժամը 2ին, ղէպի Գահիրէ մեկնեցաւ Ս. Աթոռ հիւրաբար գտնուող Գերշ. Տ. Մամբէ Ս. Արքեպս. Սիրունեանը:

— Կէսօրին, Գերշ. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Գերշ. Տ. Խորէն Սրբազան Բարոյեանի և Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեանի, մասնաւոր հրաւերով ներկայ գտնուեցաւ տեղւոյս անդլիական հիւպատոս Վսեմ. ձատի կողմէ տրուած ճաշատեղանին, իր քնակարանին մէջ:

✦ 25 Յուն. Դշ. — Յետ երեկոյեան ժամերգութեան կատարուեցաւ վաղուան տօնին նախատեսվող նախագահութեամբ Գերշ. Տ. Խորէն եպս. Բարոյեանի: Ապա կատարուեցաւ Ս. Աթոռոյ կիսամարդակազներու և զպիւրներու ձեռնադրութիւն:

✦ 26 Յուն. Եշ. — Տօն Անուանակոչութեան Տեառն մերայ. Ս. Գալոբեանց Տաճարին մէջ առաւօտեան ժամերգութեան յետոյ, վարդապետ հայրեր գըլ-

խաւորութեամբ Գերշ. Տ. Խորէն եպս. Բարոյեանի պաշտօնական գնացքով իջան Ս. Գարութեան Տաճար: Տաճարի մուտքին կատարուեցաւ «Հրաշափառ»ի հանդիսաւոր ընդունելութիւն, որմէ ետք Թափօրը ուղղուեցաւ ղէպի Ս. Գերեզման Քրիստոսի, ուր կատարուելէ յետոյ ուխտարարողութիւնը, Ս. Գերեզմանին շուրջանակի դարձմամբ Թափօրը կանգ առաւ մեր տեսչարանը: Կարճ զաղարէ մը ետք՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին առջև կատարուեցաւ ձաշու ժամերգութիւն, և ապա հանդեսաւոր Ս. Պատարագ, զոր մատուց Գերշ. Տ. Խորէն Սրբազան: Պատարագի ընթացքին կատարուեցաւ նաև Ս. Աթոռոյ սարկաւազական ձեռնադրութիւնները: Յետ Ս. Պատարագի միաբան հայրեր դարձեալ պաշտօնական գնացքով վերադարձան մայրավանք, Հայոց Գերշ. մուտքէն մինչև մայրավանք Թափօրը կը յառաջանար ծիսական կարգաւորութեամբ և «Լոյս ի լուսոյ» շարականի երգեցողութեամբ, ապա բարձրանալով պատրիարքարան, հոն կատարուեցաւ Ս. Աթոռոյ Տեօրնեաց արարողութիւնը: Նոյնը կրկնուեցաւ վանքի սեղանատան, խոհանոցին, մասնատան և փռուին մէջ:

Ըստ աւանդական սովորութեան օրուան ճաշէն հաշական «Ներիսա»ն: Այս առթիւ Գերշ. Տեղապահ Հօր մօտ ճաշատեղանի հրաւիրուած էին Երուսաղէմի վսեմ. քաղաքապետը և բարձրատիճան կառավարական անձնաւորութիւններ և սպաներ:

✦ 27 Յուն. Ուր. — Երեկոյեան ժամերգութեան վերջ կատարուեցաւ վաղուան տօնին նախատեսվող Ս. Գալոբեանց Տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմ. հանձանի:

— Յետ միջօրէի, ժամը 2ին, ղէպի Անթիլիաս մեկնեցան Գերշ. Տ. Խորէն եպս. Բարոյեան և Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան: Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Աթոռապետական զօրծերով անկէ պիտի անցի Եւրոպա և ապա Ամերիկա:

✦ 28 Յուն. Շր. — Տօն Ծննդեան Ս. Յովնանու. Կարապետին. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գալոբեանց Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ. պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւանեսան:

✦ 29 Յուն. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գալոբեանց Տաճարին մէջ. պատարագիչն էր Հոգ. Տ. Միլոտ Վրդ. Կրճիկեան:

Ծանօթ. — Երանանոր՝ Տ. Կիւրեղ Ս. Պատրիարք Հօր մահուան տուգին պատճառաւ, այս տարի զանց տօնուեցան Նոր Տարւոյ և Ս. Որդւոց Որոտման տօնին Թափօրական հանգիստութիւնները: Զանց տօնուեցան նմանապէս յարանուանութեանց շնորհաւորական փոխադարձ այցելութիւնները: